«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «TERRAMEDICUM» ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ՄԱԾՁԲ-2022/16-ԵՊԲՀ>>

<<16>> << 12 >> 2021 թ.

ք. Երևան

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր **Ա.Մուրադյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՍԱՅԹԵՔ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Ա.Սայադյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«TERRAMEDICUM» կրթական հարթակի սպասարկման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 12000000 (տասներկու միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Սույն պայմանագրի մասով Կատարողը ծառայության մատուցումը իրականացվելու է 2022թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից սկսած:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն **համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում** իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք

կիանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **15** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան

համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»	«ԿԱՏԱՐՈՂ»
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամ	«ՍԱՅԹԵՔ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան Ծարավ-Աղբյուրի 58/1
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
h/h 11500166513800	Հ/Հ՝ 2052222096651001
ՀՎՀՀ 01503448	ՀՎՀՀ՝ 00905562
Ռեկտոր Ա. Ա. Մուրադյան	Հեռ.՝ 094 12-00-12
	Էլ. Փոստ՝ alexander.sayadyan@gmail.com , armanmelkonyan@yahoo.com
	Տնօրեն Ա. Սայադյան
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«16» 12 2021 թ. կնքված
ՄԱԾՁԲ-2022/16-ԵՊԲՀ
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	72261160	Sylex SA ընկերության կողմից ստեղծված «Terramedicum» հարթակը հնարավորություն է տալիս կատարելագործել բժիշկ-ուսանողների կլինիկական մտածողությունը, ինչը հնարավոր է դարձնում նվազեցնել ախտորոշման գործընթացում հնարավոր սխալների հավանականությունը, ինչպես նաև թեսթավորել ուսանողների գիտելիքներն ու հմտությունները՝ առավելագույնս այն մոտեցնելով իրական պրակտիկային: Հարթակի սպասարկման ծառայության բնութագրի նկարագրությունը ըստ հավելված 1-ի:	հատ	12000000	12	ք. Երևան, Կորյունի 2	Ծառայության մատուցումն իրականացվելու է 2022 թվականին՝ յուրաքանչյուր ամիս, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած

Հավելված 1

R1.	**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**
R1.1	**Համակարգի մոդուլներ** • Համալսարանի ադմինիստրատորի համակարգ • Ամբիոնի ադմինիստրատորի համակարգ • Դասախոսի համակարգ • Ուսանողի համակարգ
R1.2	**Համակարգի մուտք** Օգտագործողները հնարավորություն ունեն մուտք գործել համակարգ առնվազն iOS 11.0 և Android 6.0 կամ ավելի թարմ օպերացիոն համակարգերով աշխատող սարքերով: Համալսարանի ադմինիստրատորները, ամբիոնի ադմինիստրատորները և դասախոսները նաև հնարավորություն ունեն մուտք գործել համակարգի վեբ տարբերակը համակարգչի դիտարկիչի (browser) միջոցով՝ ադմինիստրատիվ ֆունկցիոնալությունից օգտվելու համար:
R1.3	**Արագագործության ցուցանիշներ** Համակարգը հնարավորություն է տալիս միաժամանակյա առնվազն 500 օգտագործողի աշխատանքը համակարգի հետ՝ առանց արագագործության նվազման:
R1.4	**Այլ սարքավորումների կամ ծրագրային պահանջների բացակայություն** Համակարգին միանալու կամ վերջինից օգտվելու համար չեն պահանջվում հավելյալ սարքավորումներ կամ ծրագրային լուծումներ, բացի այն iOS 11.0 և Android 6.0 կամ ավելի թարմ օպերացիոն համակարգերով աշխատող սարքերից, որտեղ պետք է ներբեռնվի հավելվածը:
R2.	**ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐ**
R2.1	**Օգտագործողների մուտք համակարգ**

	Օգտագործողները համակարգ մուտք են գործում նույնականացված ձևով: Նույնականացման համար կիրառվում են համալսարանի կողմից օգտագործողներին անձնական տրված էլ. փոստի հասցեները:
R2.2	**Խնդիրների կառուցվածքը և լուծման եղանակը** Համակարգը գեներացնում է խնդիրը դասախոսի կողմից նախապես ընտրված ախտորոշմամբ կամ էլ ամբողջովին պատահականության սկզբունքով: Պատահականության սկզբունքով որոշվում են պացիենտի տարիքը, սեռը, տվյալ ախտորոշման համար բնորոշ ախտանշանները, լաբորատոր և գործիքային հետազոտությունների արդյունքները և ռիսկի գործոնները՝ կիրառելով ապացուցողական հիմք ունեցող վիճակագրական տեղեկատվություն: Համակարգն ուսանողին ի սկզբանե տրամադրում է մի քանի ախտանիշ, որից հետո առաջարկում է շարունակել հետագա հետազոտությունները՝ կասկածվող ախտորոշումների շրջանակը նեղացնելու համար: Ուսանողի կողմից կատարվող հետազոտությունները առավելագույնս մոտիկ են առօրյա պրակտիկայում կիրառվող ստանդարտ հետազոտություններին, որոնց մեջ կարող են ներառվել ինչպես առանձին, այնպես էլ խմբային չափումներ կամ ախտանշաններ: Յուրաքանչյուր խնդրի հետ միասին համակարգի կողմից տրվում է նաև տվյալ խնդրի լուծման այլընտրանքային տարբերակ: Խնդրի ճիշտ պատասխանի դեպքում համակարգը ուսանողին տրամադրում է համապատասխան քանակի միավորներ կախված ճիշտ պատասխանին հասնելու ուսանողի ընտրած ճանապարհից: Ձախողման դեպքում ուսանողը կորցնում է միավորներ:
R2.3	**Համալսարանի ադմինիստրատորը համակարգի հնարավորությունները** Համալսարանի ադմինիստրատորը հնարավորություն ունի՝ Ա) Ստեղծել և խմբագրել ամբիոնների կառուցվածը, վերջիններիս մեջ ավելացնելով ընտրված դասախոսների; Բ) Ավելացնել ուսանողների՝ նրանց տալով կրթական հարթակից օգտվելու հնարավորություն; Գ) Ուսումնական դասընթացների անցկացման կամ քննական նպատակներով ստեղծել ուսումնական խումբ, վերջինիս մեջ ավելացնելով ընտրված ուսանողների;

	Դ) Տեսնել համակարգի կողմից գեներացված ամփոփ հաշվետվություններ ըստ ամբիոնների, դասախոսների, խմբերի կամ ուսանողների
R2.4	**Ամբիոնի ադմինիստրատորը համակարգի հնարավորությունները** Ամբիոնի ադմինիստրատորը հնարավորություն ունի՝ Ա) Խմբագրել նշված ամբիոնի կառուցվածը, վերջինիս մեջ ավելացնելով ընտրված դասախոսների; Բ) Ուսումնական դասընթացների անցկացման կամ քննական նպատակներով ստեղծված ուսումնական խմբերի մեջ ավելացնել ընտրված ուսանողների; Գ) Տեսնել համակարգի կողմից գեներացված ամփոփ հաշվետվություններ ըստ նշված ամբիոնի, դասախոսների, խմբերի կամ ուսանողների
R2.5	**Դասախոսի համակարգի հնարավորությունները** Դասախոսը հնարավորություն ունի ՝ Բ) Համակարգի միջոցով անսահմանափակ անգամներ գեներացնել նոր խնդիրներ՝ նշելով խնդրի աշխատորոշումը, հնարավոր բարդացումները կամ ուղեկցող հիվանդությունները կամ բարդության աստիճանը; Գ) Խմբագրել գեներացվող խնդրում առկա բոլոր տվյալները; Դ) Ուղարկել խնդիրը իր խմբում ընդգրկված ուսանողներին; Ե) Դիտել ուսանողների կողմից լուծված խնդիրների արդյունքները: Համակարգը պետք է ի վիճակի լինի միևնույն ախտորոշման համար միջինում գեներացնել տարբեր բարդության առնվազն 50 խնդիրներ:
R2.6	**Ուսանողի համակարգի հնարավորությունները** Ուսանողը հնարավորություն ունի՝ Ա) Ընդունել ուսումնական խմբում ներառվելու հրավերը Բ) Ընդունել իրեն կցված դասախոսի ուղարկած խնդիրը Գ) Սահմանված ժամանակահատվածում լուծել խնդիրը Դ) Դիտել խնդրի արդյունքները Դ) Դիտել խնդրի լուծման այլընտրանքային տարբերակը Ե) Ինքնուրույն գեներացնել և լուծել պատահական խնդիրներ

R2.7	**Խնդրի լուծման արդյունքների պահպանում** Համակարգը պահպանում է յուրաքանչյուր ուսանողի խնդրի արդյունքները՝ ուսանողի կամ դասախոսի կողմից հետագայում դիտելու հնարավորությամբ:
R2.8	**Մրցաշարային աղյուսակ** Համակարգը հնարավորություն ունի յուրաքանչյուր ուսումնական խմբի համար ձևավորելու մրցաշարային աղյուսակ՝ օգտագործողների հավաքած միավորների հիման վրա:
R2.9	**Միջազգային ստանդարտների կիրառում** Համակարգում օգտագործվող հասկացություններն ու տերմինները համապատասխանում են միջազգայնորեն ընդունված ստանդարտներին, ինչպիսիք են՝ • ICD-11 կամ ICD-10 • SNOMED CT • LOINC
R2.10	**Համակարգում առկա ախտորոշումները** Համակարգում առկա են առողջության առաջնային օղակում առավել հաճախ հանդիպող հազարից ավելի տարբեր ախտորոշումներ, հետևյալ մասնագիտացումներից՝ - Ինֆեկցիոն հիվանդություններ - Սրտաբանություն - Անոթային վիրաբուժություն - Ռևմատոլոգիա - Ուրոլոգիա - Նեֆրոլոգիա - Նյարդաբանություն - Գաստրոէնտերոլոգիա - Հեպատոբիլիար համակարգ - Արյունաբանություն - Էնդոկրինոլոգիա - Մաշկաբանություն - ԼՕՌ հիվանդություններ - Ակնաբուժություն

	- Մանկաբարձություն և Գինեկոլոգիա - Էլեկտրոլիտներ, Վիտամիններ - Ստոմատոլոգիա - Թունավորումներ - Իմունոլոգիա - Մանկաբուժություն - Թոքաբանություն - Ուռուցքաբանություն - Օրթոպեդիա և Վնասվածքաբանություն - Կոլոռեկտալ վիրաբուժություն - Ընդհանուր վիրաբուժություն - Գենետիկա
R2.11	**Համակարգի լեզուն** Հայերեն, ռուսերեն և անգլերեն
R3.	**ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ**
R3.1	**Նախնական դրույթներ** Համակարգն անհրաժեշտ է կառավարել՝ հիմք ընդունելով «Երևանի Մխիթար Հերացու անվան Պետական Բժշկական Համալսարան» հիմնադրամի և «Սայլեքս» ՍՊԸ -ի միջև բարձրագույն եվ հետբուհական բժշկական կրթության բնագավառում «Terramedicum» կրթական հարթակի ներդրման մասին հուշագրի դրույթները: Համակարգն անհրաժեշտ է կառավարել՝ հաշվի առնելով, որ օգտահաշիվների թիվը պայմանավորվում է ԵՊԲՀ Հիմնադրամի դասախոսների և ուսանողների ընթացիկ քանակով:
R3.2	**Ծրագրային ապահովման անխափան շահագործում** Սպասարկող ընկերությունը պարտավորվում է ապահովել համակարգի ծրագրային ապահովման անխափան աշխատանքը և շարունակաբար միջոցներ ձեռնարկել ծրագրային գործիքակազմը բարելավելու համար, որը ներառում է, առանց սահմանափակման, հետևյալը՝ Ա) Ծրագրային ապահովման շահագործում՝ համաձայն Լավագույն արդյունաբերական պրակտիկայի և դրա շահագործման կանոնների, եթե այդպիսիք առկա են,

	Բ) Ծրագրային ապահովումը և դրա մեջ ներառված ծրագրային տարրերը մշակած երրորդ անձանց հետ կապի պահպանում՝ անհրաժեշտ օժանդակության և ծրագրային թարմացումներ ստանալու համար, եթե այդպիսիք տրամադրվում են:
R3.3	**Ծրագրային խոտանների շտկում** Սպասարկող ընկերությունը պարտավոր է համակարգի շահագործման ընթացքում շտկել ծրագրային խոտանները դրանք իրեն հայտնի դառնալուց հետո հետևյալ ժամկետներում՝ 1. Ծրագրային ապահովման բնականոն օգտագործմանը էապես չխոչընդոտող խոտաններ - առավելագույնը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում 2. Ծրագրային ապահովման այնպիսի խոտաններ, որոնք խոչընդոտում են ծրագրային ապահովման բնականոն օգտագործումը ոչ ավել, քան 100 Օգտագործողի համար - առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում 3. Ծրագրային ապահովման այնպիսի խոտաններ, որոնք խոչընդոտում են ծրագրային ապահովման բնականոն օգտագործումը 100-ից ավել Օգտագործողների համար - առավելագույնը 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Խոտանների հայտնաբերման համար սպասարկող ընկերությունը պարտավոր է իրականացնել ծրագրային ապահովման մշտական ստուգումներ: Խոտաններ են համարվում վթարներ չհամարվող՝ ծրագրային ապահովման բոլոր տեխնիկական խնդիրները:

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 1150016651380 0
ՀՎՀՀ՝ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ԿԱՏԱՐՈՂ»
«ՍԱՅԹԵՔ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան Ծարավ-Աղբյուրի 58/1
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2052222096651001
ՀՎՀՀ՝ 00905562
Հեռ.՝ 094 12-00-12
Էլ. Փոստ՝ alexander.sayadyan@gmail.com , armanmelkonyan@yahoo.com
Տնօրեն Ա. Սայադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված N 2
«16» 12 2021 թ. կնքված
ՄԱԾՁԲ-2022/16-ԵՊԲՀ
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261160	Արհեստական բանականության ծրագրի սպասարկման ծառայություն	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան»
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մոսինյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ԿԱՏԱՐՈՂ»
«ՍԱՅԹԵՔ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան Ծարավ-Աղբյուրի 58/1
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2052222096651001
ՀՎՀՀ՝ 00905562
Հեռ.՝ 094 12-00-12
Էլ. Փոստ՝ alexander.sayadyan@gmail.com , armanmelkonyan@yahoo.com
Տնօրեն Ա. Սայադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն